373
Ulépkép.
1557

1895

373
Հ-29

Գիրքը
1507

2013

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ԿԱՄ

ԼՍԱՐԱՆԻ

ՈՐ Ի ՎԵՆԵՏԻԿ

ՎԵՆԵՏԻԿ
Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1895

2002

2010

8323 -ա2

373
2-29

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՈՐ Ի ՎԵՆԵՏԻԿ

Գանձարանոց Գրադարան
ՍԵՐԳԷՐԱԿԵԱՆՑ
Ա ա ա ր ա կ ա ն

1468
8008
3494

Երկոքին բարեյիշատակ ազգասէրքն և երախտաւորք Սամուէլ Մուրատ և Եդուարդ Ռափայէլ Ղարամեան՝ վսեմ մտածութեամբ մեր Ազգին բարոյական և ուսումնական լուսաւորութիւնը կենդանացնել փափաքեցան։ Այս նպատակաւ վերջանձն առատաձեռնութեամբ թողուցին կտակաւ մէյմէկ գումար դրամոց, որոց եկամտովը հայազգի որբ և աղքատ տղայք ձրի դասատիարակուին. յանձնելով սոյն վարժարանաց բացարձակ հոգաբարձութիւնն և դրամոց մատակարարութիւնը Վենետկոյ Մխիթարեան Միաբանութեան։

Մուրատեան Վարժարանն ի Պադուա հաստատուեցաւ յամին 1834, և ապա փոխադրուեցաւ ի Պարիզ յամին 1846. իսկ Ռափայէլեան Վարժարանն ի Վենետիկ՝ բացուեցաւ յամին 1836, և ի Վենետիկ մնաց ցայսօր, ուր միացաւ իրեն հետ Մուրատեան Վարժարանն ևս Գաղղիոյ ընդ Բրուսիոյ պատերազմին ատենը, և անուանեցաւ Մուրատ–Ռափայէլ Վարժարան։

ՎԱՐԺԱՐԱՆԸ

1. Մուրատ–Ռափայէլ Վարժարանը ամփոփեալ է 'ի Վենետիկ Քարմինի (Ai Carmini) ըսուած թաղը, Զենոբիո փառաւոր և ընդարձակ պալատան մէջ։ Ունի հոյակապ ոսկեզօծ սրահ մը հանդիսից համար. բազմաթիւ սենեակներ, դասարանք, թանգարանք, սեղանատուն, ննջարան առողջ՝ լուսաւոր և օդաւէտ, հրապարակ մարմնակրթանաց, մակոյկ մարմնամարզի, պարտէզ ծաղկանց և ծառոց, գաւիթ, գրատուն, ծովային և անոյշ ջրոց բաղանիք, ընտիր խմելու ջուր։

2. Աշակերտք կրնան ըլլալ ձրիավարժ և թոշակաւորք։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԶՐԻԱՎԱՐԺ ԱՇԱԿԵՐՏԱՑ

1. Մուրատ–Ռափայէլ Վարժարանը կը պահէ 45 ձրիավարժ աշակերտք, բարերարաց դրամով։
2. Բաց 'ի այդ 45 աշակերտներէն ի հաշիւ Մուրատ–Ռափայէլ Վարժարանի՝ 'ի Քաղկեդոն Մխիթարեան վարժարանին մէջ կը կրթուին 30 աշակերտք ձրիաբար։
3. Աշակերտք ի Մուրատ–Ռափայէլ Վարժարան գալու համար՝ հարկ է որ նախ Կրթարանի (Կիմնազիոնի) ամբողջ, և Լսարանի (Լիկէոնի) երկու տարիները կատարած ըլլան Մխիթարեան վարժարանի մէջ ի Քաղկեդոն. և հոն լաւ վկայական առած ըլլան բարի վարուց և ուսման մասին։
4. Վարժարանս մտնող տղայոց տարիքը տասնու հինգէն պակաս պիտի չ'ըլլայ։
5. Երկու եղբարք 'ի միասին չեն ընդունուիր, բայց եթէ մէկուն տարեկան ծախքը հատուցանելով։
6. Ամենայն ծնողք կամ ազգականք պէտք է ճարեն և հատուցանեն կանխիկ՝ երթի և մտից և նշանագրեստուց համար 15 նաբոլէոն ոսկի, դարձեալ զգեստեղէնքը ըստ 21 Յօդուածին։ Նոյնպէս դարձի համար ամեն ընտանիք պէտք է ջանան հատուցանել ժամանակին 15 նաբոլէոն ոսկի։
7. Բայց անկարողէ և անօգնականներէն չպահանջուիր ինչ։
8. Բաց 'ի առաջին տարիէն, միւս տարիները քննութիւնը լաւ չանցնող աշակերտը, կը կորսնցնէ ձրիավարժ ըլլալու իրաւունքը։
9. Ամենէ դուրս իր որդին ետ կանչողը պարտական է գոնէ ամիս մը առաջ Վարժարանիս Տեսչին իմացնել և դարձին ծախքը հատուցանել։
10. Երբ տղայ մը ստահակ և անուղղայ է, Վարժարանիս Տեսուչը ամիս մը կամ տասնուհինգ օր առաջ կ'իմացընէ ծնողացը. և եթէ հարկ ըլլայ՝ առանց անոնց հաւանութեան սպասելու ետ կը ճամբէ տղան։ Նոյնպէս կ'ընէ երբ տղայ մը հիւանդոտ կամ անընդունակ ըլլայ ուսման կամ արհեստի։
11. Տղայոց դիպուածական հիւանդութիւններն կը հոգայ Վարժարանս, բայց ոչ նոյնպէս հինցած և բնաւորական եղած հիւանդութիւնք։ Այսպիսի տղաք ետ կը դարձուին. իսկ թէ հիւանդութիւننին վտանգաւոր չէ, կը պահուին ծնողաց ծախիւք։

Գ. ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՏԵՆԱՐԱՆ
ՄՈՍԿՈՎ
1557-2013
1.8. 1550.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԹՈՇԱԿԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏԱՑ

12. Մուրատ–Ռափայէլ Վարժարանը բաց 'ի 45 ձրիավարժ աշակերտաց, կ'ընդունի նաև թոշակաւոր աշակերտք՝ հետևեալ պայմաններով ուղղակի այն քաղաքներէն եւ, որոնք դիւրութիւն չունին Քաղկեդոնի վարժարան գնալու։
13. Այդ աշակերտք պէտք է աւարտած ըլլան Կրթարանի (Կիմնազիոնի) բովանդակ ընթացքը և Լսարանի (Լիկէոնի) երկու տարիները, ինչպէս յեռոյ պիտի դնենք ուսմանց ցանկին մէջ թիւ 26։
14. Այս իրենց ըրած ուսմանց պէտք է քննութիւն տան կամ ի Մխիթարեան վարժարան Քաղկեդոնի, և կամ 'ի Մխիթարեան վարժարան Տրապիզոնի և անոնցմէ վկայական ունենան։ Թէ քննութիւնը չանցընեն, պէտք է երթան 'ի Մխիթարեան վարժարան Քաղկեդոնի հոն ուսանելու, վճարմամբ թոշակի։
15. Եւրոպիոյ քաղաքներէն և Եգիպտոսէ աշակերտք կ'ընդունուին, եթէ ունենան վկայական պահանջեալ ուսմանց և բարի վարուց՝ տեղւոյն Վարժարանէն։
16. Տղու մը տարեկան առաջին կարգի թոշակն է, երթի և դարձի և մտից դումարներէն զատ, 75 նաբոլէոն ոսկի. երկրորդն է 50. երրորդը՝ 25։
17. Երթի և դարձի ծախքը ինչպէս նաև մուտքը կանխիկ կը վճարուին։ Թոշակը վեցամսեայ կանխիկ կը վճարուի ի Սեպտեմբեր 15 (Ն. Տ.) և 'ի 15 Մարտի (Ն. Տ.)։ Աշակերտ մը պէտք է գտնուի ի Վարժարանս 'ի 15 Սեպտեմբերի, կամ գոնեայ Հոկտեմբերի մէջ։ Բայց թոշակը նոյնպէս կը վճարուի Սեպտեմբեր 15ին։
18. Եթէ վճարքը ուշանայ ամիս մը, Տեսչութիւնը ազատ է աշակերտը յետս յղելու։ Եթէ վեց ամիսը չաւարտած աշակերտը կանչուի 'ի ծնողաց, և կամ ի վերոյ ասացեալ Թիւ 10 պատճառներով տղայ մը ետ դարձուի, Տեսչութիւնը չվճարեր թոշակի մնացեալ մասերը։
19. Եթէ ծնողք ուզեն որ տղան Վարժարանիս մէջ դաս տրուած ուսմունքէն դուրս նոր լեզու մը, գործիաւոր երաժշտութիւն մը, արուեստ մը, և կամ որ և է գիտութիւն ուսանի, պէտք է որ ժամանակին իմացունեն և եղած ծախքը զատ հատուցանեն։
20. Աշակերտաց քով ստակ ամենևին պիտի չգտնուի. և եթէ ծնողք ուզեն ստակ ղրկել որ տղուն համար գիրք կամ ուրիշ մանր հարկաւոր բաներ առնուին, ստակը Տեսչին քովը կը պահուի մասնաւոր Հաշուեգրքի մէջ, և տղուն պէտք եղածը ինքը կը գնէ։

21. Աշակերտ մը Վարժարան մտած ժամանակ պէտք է ունենայ

6 սաւան	18 թաշկինակ
4 բարձի երես	1 գլխարկ
1 կարգ չուխայէ հատ ամենօրեայ զգեստ ձմեռուան համար	6 երեսսրբիչ
2 կարգ ամառնային ամենօրեայ զգեստ	3 զոյգ կօշիկ
4 փողոտ (գրաւատ)	1 պարկ ուղղոյ (չանդա)
16 շապիկ	1 զոյգ հողաթափ (քանդուֆլ)
16 վարտիք	2 սանր
4 ֆլանէլ բաճկոն	1 վրձին չուխայի
18 զոյգ գուլպայ	1 վրձին գլխոյ
1 մկրատ	1 վրձին ակռայի
	1 կարոց

22. Զրիավարժ աղքատ աշակերտաց ծնողքն եթէ կարող չըլլան այս ամէն ճերմակեղէնքն և հագուստը ամբողջապէս հոգալու, կրնան հաւանութեամբ Տեսչութեան քիչ մը նուազեցնել անոնց թիւը։

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ

23. Քրիստոնէական բարեպաշտ դաստիարակութիւն՝ ուղիղ բարոյականի մի միայն հիմն ըլլալով, Վարժարանիս աշակերտները ամէն կիւրակէ և տօն օրեր հաւատոյ վարդապետութեանց և բարի վարուց վրայ խրատ և կրթութիւն կը լսեն։ Վարժարանիս մատրանը մէջ ամէն օր առաւօտ և երեկոյ միաբանական աղօթք կը կատարեն. կիւրակէ և հինգշաբթի սուրբ պատարագին առաջիկայ կ'ըլլան։ Տաղաւարներուն՝ սուրբ խորհրդոց կը մերձենան խոստովանելով և հաղորդուելով. յետոյ Մխիթարեան վանաց եկեղեցին եպիսկոպոսական հանդիսաւոր Պատարագի ներկայ կը գտնուին։

24. Աշակերաք, հինգշաբթի օր մասնաւոր դասախօսութիւն կը լսեն Մարդավարութեան կանոնաց և պատշաճից վրայ։ Ամենայն հոգ կը տարուի զիրենք բարեկիրթ և պատուաւոր զաւակք և քաղաքացիներ ընելու։

25. Տեսչութիւնը մասնաւոր փոյթ ունի դարձեալ հեռու պահելու յաշակերտաց ամէն տեսակ վնասակար գիրք և ուրիշ որ և իցէ մոլորեցուցիչ առիթներ։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ

26. Վարժարանիս շրջանը երեք տարուան շրջան է։ Առաջին և երկրորդ տարուան մէջ կ'ընեն Լսարանի (Լիկէոնի) իմաստասիրական և չափաբերական (մաթէմաթիկական) վերջին երկու տարիները։ Իսկ երրորդ տարուան մէջ կը կատարելագործեն ուսումները և միանգամայն Համալսարանական ընթացքի քննութիւններու կը պատրաստուին և կամ կը զբաղին արհեստներու՝ ընտիր Հաստատութեանց և Գործարաններու մէջ. կրնան յաճախել Քաղքիս Վաճառականութեան և կամ Նաւային բարձր Վարժարանները։

Ա ՏԱՐԻ	Բ ՏԱՐԻ
Հայերէն	Հայերէն
Իտալերէն	Իտալերէն
Գաղղիարէն	Գաղղիարէն
Տաճկերէն	Տաճկերէն
Անգղիարէն (կամաւոր)	Անգղիարէն } կամաւոր
Գրաֆաչիւ (լրումն)	Ռուսերէն } կամաւոր
Երկրաչափութիւն (լրումն)	Գերմաներէն } կամաւոր
Մեքենականութիւն	Եռանկիւնաչափութիւն
Բնալուծութիւն	Բնագիտութիւն
Բնական Պատմութիւն { Կենդանաբանութիւն, Հանքաբանութիւն }	Բնալուծութիւն
	Իմաստասիրութիւն
	Իրաւագիտութիւն քաղաքական
Հաշուակալութիւն	Հաշուակալութիւն
Պատմութիւն Նոր Աղգաց	Պատմութիւն ժամանակակից
Մատենագրութիւն Նոր Աղգաց	Մատենագրութիւն ժամանակակից
Գծագրութիւն	Գծագրութիւն
Երգ եւրոպական	Երգ եւրոպական
Մարմնակրթանք	Մարմնակրթանք

Գ ՏԱՐԻ

Պատրաստուողներուն Համալսարանի կամ Ուրիշ Բարձր վարժարանաց

Հայերէն	Բնագիտութիւն Արուեստական
Իտալերէն	Բնալուծութիւն Արուեստական
Գաղղիարէն	Հաշուակալութիւն
Տաճկերէն	Իրաւագիտութիւն Վաճառականական
Անգղիարէն } կամաւոր	Գծագրութիւն
Ռուսերէն } կամաւոր	Երգ եւրոպական
Գերմաներէն } կամաւոր	Մարմնակրթանք
Լատիներէն } Համալսարանական Աշակերտաց	
Յունարէն } Համալսարանական Աշակերտաց	

27. Վերոյ ասացեալներէս կը հասկցուի, որ ի Վարժարանս ընդունուող եթէ ճրիավարժ և եթէ թոշակաւոր աշակերտք պէտք են գիտնալ՝ Քերականութիւն և շարագրութիւն Հայերէն, Իտալերէն, Գաղղիարէն լեզուաց, Պատմութիւն Միջին Դարու, Մատենագրութիւն հին, Տիեզերագիտութիւն, Աշխարհագրութիւն Բնական և Քաղաքական: Երկրաչափական սկզբունք, Գրահաշիւ մինչև հաւասարութիւնք բազում անծանօթով, Բնական Պատմութիւն՝ Երկրաբանութիւն և Բուսաբանութիւն:

28. Վարժարանիս մէջ ուսմունք և լեզուք և արուեստք ըստ պատշաճի աւանդելու համար, Տեսչութիւնն Պետութեան բարձր Վարժարանաց վկայեալ վարժապետներ ընտրած է:

29. Ամեն մի ուսմունք լրացած ատեն, անմիջապէս խիստ և երկար քննութիւն կ'ըլլուի նոյն ուսման առանձին. և առաջին կարգի քաջերուն՝ Տեսչութիւնն կը շնորհէ մասնաւոր Վկայագիր նոյն ուսման, ստորագրեալ նաև յՈւսուցչէ այն ուսման:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՄ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

30. Աշակերտք յետ երեք տարուան շրջանին մէջ սահմանեալքը աւարտելու, պիտի քննուին յՈւսումնական ժողովոյ Մխիթարեան Միաբանութեան որ ի Վենետիկ, և արժանաւորք ըստ ամենայն մասանց պիտի անցնին ի Համալսարանական Վարժարան և կամ 'ի Բարձր Մասնագիտական Վարժարանս, ուր որ սահմանէ Վենետկոյ Ուսումնական ժողովը:

31. Միաբանութիւնս համալսարանական դասուն գիւրութեան համար առանձնաշնորհութիւն ստացած է Գաղղիոյ Տէրութենէն յամին 1867, որ մեր ուսումնաւարտ աշակերտքն՝ Վարժարանիս ընդհանուր Վկայագրովը կարենան Գաղղիոյ Համալսարանները մտնել: Յամին 1879 Իտալիոյ Պետութենէն ալ այս առանձնաշնորհութիւն ստացաւ, որ մեր աշակերտքն ազատ ըլլան Կրթարանի (Կիմնազիոնի) քննութիւններէն, և տան միայն Լսարանի (Լիկէոնի) և Բնագիտական — Զափաբերական ընթացից քննութիւնները, որ կը համապատասխանեն Վարժարանիս շրջանին: Յամին 1895 Նոյեմբերի մէջ ալ շնորհուեցաւ, որ մեր Վարժարանի աշակերտք կարենան մտնել ի Վարժարանն Ճարտարապետութեան (Architecture), Վարժարանիս վկայականաւ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ

32. Վարժարանս ջանալով որ Աշակերտաց մտաց մէջ տպաւորուին խնայութեան, մաքրութեան և զգուշութեան ամենայն սկզբունք, պատշաճ չափաւորութիւնը միշտ պահած է:
Աշակերտաց կերակուրներն են
Առաւօտուն կաթ խահուէիւ, հաց:
Ճաշուն՝ ապուր, միս՝ կանաչեղինաւ, կաթնեղէն կամ խմորեղէն մը, հաց և գաւաթ մը գինի:
Դամը 4ին փոքրիկ հաց մը և ս:
Ընթրեաց՝ մէկ տեսակ մսեղէն կերակուր, պանիր, պտուղ:
Եօթնեակի մէջ երկու օր պահք ունին ձկնեղինաք և կթեղինաք:

33. Աշակերտաց ճերմակեղէն, հագուստք և կօշիկք շաբաթը երկու անգամ կը փոխուին: Ունին պատշաճ նշանագրեստ ձմեռնային և ամառնային:

34. Աշակերտք թէ 'ի Վարժարանն և թէ 'ի դուրս՝ միաձև զգեստ կը կրեն:

35. Վարժարանս յատուկ բժիշկ, վիրաբոյժ և ատամնաբոյժ ունի. Ծովու և անոյշ ջրոյ բաղանիք՝ ամառնային եղանակի համար:

36. Մեծ արձակուրդի օգտակարութեան համար ունի Ամարաստան՝ Ալպեանց ոտքը բլրոյ վրայ ընտիր օդով, ջրով և տեսարանաք, մօտ Ազոլոյ գիւղաքաղաքին ուր աշակերտք կ'անցընեն վեց եօթնեակք:

37. Օրուան հանգստեան ժամերուն՝ աշակերտք կը հրահանգին մարմնակրթանաց մէջ:

38. Ի վերջոյ իրր կնիք Ցայտարարութեանս, հաւասար խնամք կ'ընդունին թոշակաւոր և ճրիավարժ աշակերտք:

Վենետիկ 15 Նոյեմբեր 1895

ՏԵՍՈՒՉ

ՄՈՒՐԱՏ–ՌԱՓԱՅԵԼ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ԳՈՒՄԱՐԻՄԱԾ ԳՐՔԱԲԱՌ >>
N L 00559 10

121